



Երիտասարդության ձայնը հանուն զարգացման և փոփոխությունների միջսահմանային հայ-վրացական համագործակցության շրջանականներում ծրագրի հերթական գործողությունը վրացական կողմի այցն էր Հայաստան: 04. 03. 2017- ին Ալավերդու № 5 դպրոցում կայացավ

երկար սպասված հայ և վրացի աշակերտների հանդիպումը: Հանդիպմանը ներկա էին դպրոցի տնօրեն Լաուրա Մելիքսեթյանը, ծրագրի հայակական և վրացական կողմերի ղեկավարներ՝ Օլեգ Դուլգարյանը և Օլգա Էնդելաձեն, դպրոցներում ծրագրերն իրականացնող ուսանողներ, մանկավարժներ, ծնողներ և աշակերտներ՝ № 5 և № 9 հայկական և Շուլավերիի ու Մառնեուլի վրացական դպրոցներից: Ողջույնի խոսքերից հետո, ծրագրի ղեկավարները շնորհանդեսի տեսքով ներկայացրեցին ծրագրում կատարված աշխատանքները, քննարկվեցին հետագա քայլերը: Այնուհետև կազմակերպվեց դասընթաց մանկավարժների և ծնողների համար, իսկ աշակերտների համար ճանաչողական էքսկուրսիա քաղաքում: Հյուրերը մեծ ոգևորությամբ ու հարուստ տպավորություններով հեռացան Հայաստանից:



